

մը կը պատմուի անօթութենէն մարդակերութեան մղուած գեղջուկներու տռաման, Արեւելեան Ռուսիոյ մէջ: Մէկը յատկանիշներէն այդ շրջանի երևակայական գրականութեան՝ ան է որ հակառակ իր զօրաւոր իրապաշտութեան, բառերը չմեզմելու ուշագրաւ ձգտումին, ու իրականութիւնը միայն նկարելու փափաքին, ունի գոյութիւն անիրականութեան յստակ երակ մը, երանգ մը: Այսքան քմայական էր եղած կեանքը այդ օրերուն, գէպքերը՝ այնքան անսպասելի, որ իրականին ընդմէջ սահմանագիծը կը թուէր կորուած, ու ամբողջութեամբ իրապաշտ մնալ ուղեղով հանդերձ, գրականութիւնը կը հանէր քմայա-

կան արդիւնքներու: Կեանքը աւելի զօրաւոր էր քան fictionը:

Զարդանկարային և ուժական այս աղջամզջութիւններու արձակէն էր որ 1924-ին ծնունդ առա նորավելու: Անէէ ասդին Սովետ Ռուսիոյ գրական ամենէն տիրական սեռը՝ վէան է կրնանք բսել: Դժուար է ժամանակագրութիւն բռնել յաջորդ տասնամեկին համար: Արդիւնքը այնքան հըսկայական է որ հեղինակներու և գիրքերու անունները միայն յիշատակել ամբողջ գիրք մը լեցնել պիտի նշանակէր: Պէտք է գոհանալ ուրեմն կիմնականներէն կիմնականներուն յիշատակումով:

ԿԼ.Պ ՍԹԲՌՈՒԿ.

## ԶԵԿՈՅՑՑ ԵՒ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԱՄԵՆ. ՄՐԲԱՋԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀՕՐ ՈՒՂԵԿՈՐՈՒԹԵԱՆ

### Ի ՍՈՒՐԲ ԷՇՄԻԱԾԻՆ



Մայր Տաճարը, ներքուստ, բացի կեդրոնական մասէն, կը պահէ իր վերջին քառասնամեակի պարզունակ վիճակը — պատերն ու առաստաղը մերկացած իրենց նախկին գեղարութեստական զարգանկարներէն և պատկերներէն: Կեդրոնին մէջ, կաթուղիկէնն ներսը, չորս սիւներու կամարները և անոնց անկիւնները, կը պահեն տակաւին ժիշտուած ոսկեթուկ զարդանկարները և ծաղկութերը: Անէէ մի քանի պատառիկներ կը մնան առաստաղի զանազան մասերու վրայ, թափելու մօտ: Առաստաղէն կախուած են բիւրեղեայ ելեկորակն ջաներ, իսկ կամարներէն արձաթեայ կանթեղներու շարաններ: Իջման և Աւագ Սեղանները զարդարուած են ոսկեզօծ խաչերով, ճաճանչներով և աշտանակներով: Հստ սովորութեան, պատարագամատույց սեղաններու վրայ մեղրամոմ կը գործածուի: Եկեղեցւոյ յատակը Աւագ Սեղանէն մինչև իջման Սեղանի գասի վանդակը ծածկուած է մեծ ու փոքր գորգերով: Կաթողիկոսական երկու գաները իրենց յատուկ ոճով և իջման Սեղանը իր կաթուղիկունով կը կազմեն Մայր Տաճարի առանձնայատուկ զարդն ու գեղեցկութիւնը: Մայր Տաճարի գանձատունը և զգեստուց պահարանները կը մնան իրենց նախկին կարգ ու սարքին մէջ: Մասնաւոր խնամքով կը պահուին հին և թանկարժէք զգեստներն, անօթներն ու զարդերը, Վեհափառ կաթողիկոսի անմիջական հովանաւորութեան տակ: Այս մասէն զգեստ կամ անօթ կ'առնուէր Եկեղեցւոյ գործածութեան համար Վեհափառի մասնաւոր արտօնութեամբ և Լուսարարապետի և Գանձատան Յանձնախումի ձեռքով: Գործածականները կը պահուին Աւագ Սեղանի ձախակողմեան պահարանին մէջ: Հոն են նաև Միւռոնի չքեղ կաթսան, Ս. Յակով Մծրնայ Հայրապետի Աջը, Ս. Գեղարդը, Նոյեհան Տապանի մասունքը և ուրիշ պատմական նուրիբական սրբութիւններ, որոնց ուխտի կուգայ ժողովուրդը, շարունակ և մեծ ջերմեառնդութեամբ: Ամէն օր, մի քանի անգամ Տաճարի մօւտքը կը բացուի ընդուռ

նելու ուխտաւորներն եւ հետաքրքիր կիրքը, որոնց մէջ մեծ թիւ կը կազմեն հայ և ուս գինուորներ։ Աջակողմեան գասի պատին մէջ կառուցուած է Մ'կրտութեան աւազանը որ նորոգուած և աւելի նպատակայարմար կերպով ձեւաւորուած գտայ այս անգամն Ս. էջմիածնի աւազանին մէջ մկրտուիլը հայ հաւատացեալներու սրտին շատ մօտիկ ըլլալով՝ Ս. էջմիածնի քահանաները գրեթէ չարուանկ պաշտամունքներու ժամեւ բարս Մ'կրտութեան Ս. Խորհուրդ կը կատարեն, հերթաբար։

Այսինքեայ երկու պաշտամունքները և կիրակնօրեայ և այլ տօներու Ս. Պատուացագները. Մայր Տաճարի մէջ կը կատարուին անխափան, զանքի մէջ ապրող բոլոր եկեղեցականներու մասնակցութեամբ: Փամերգութեանց երգեցողութիւններուն կը մասնակցին մի քանի աշխարհական ձայնաւոր դպիրներ, փոխասացութիւնը հերթաբար կը կատարեն Վաղարշապատցի տառներկու ձայնաւոր պատահիներ Պատարագներու երգեցողութիւնը կը վարէ Աթք. Տ. Նիկոլ Քնչյ., իր մարզած երգեցիկ խումբով: Միարան վարդապետներ և քահանաներ նումբրով պատահի կ'երթան էջականնէն դուրս գտնուող եկեղեցներն ու պատմական սրբավայրերը՝ աննոց տօն օրերուն, Սրբոց Հոգիփախմանց և Փայիսանեաց տօներուն աննոց նույիրուած տաճանքները, Ս. Մեսրոպի և Թարգմանչաց տօներուն Օշականի եկեղեցին, Պայծառակերպութեան տանին Գառնի և Գեղարքուայ վանքի եկեղեցին և այլն: Մայր Տաճարի բոլոր պաշտամունքներուն միշտ ներկայ կը գտնուի ժողովուրդը մեծ կամ փոքր թուով, իրենց աշխատութեան ժամերու և արձակուրդներու համաձայն: Տաճարի ներքին և արտաքին մասերու ամբողջական նորոգութիւնը Ազգային-Եկեղեցական Ժողովի հրատապ հարցերէն մին էր և պիտի ներկայացնի Ժողովի Անկոյցին մէջ:

Վեհարանը ամբողջութեամբ նորոգուած էր գորսսէն և ներսէն, բացի Մալկեայ Դաճիկէն, ուր կը գտնուի Կաթողիկոսական Գահը և քովի անձնական աշխատութեան ծաղկեայ սենեակէն և ննջարանէն: Նորոգուած էր ամբողջ Կահաւորումը: Պատերը զարդարուած էին կաթողիկոսներու իւղաներկ մեծադիր պատկերներով, պատուհաններէն կախուած էին վայելուչ վարագոյններ, սրաներու և սենեակներու յատակները ծածկւած էին արժէքաւոր գորգերով: Վեհարանի մէջ կը գտնուէր նաև Կոմիտաս Վարդապետի եղանակոն:

Վեհարանի ընդարձակ, պտղաւէտ և ծաղկաւէտ պարտէշ -քանջարանոցը, որ միշտ խնամքի առարկայ է եղած իրեւ Վեհարանի առողջական պայմաններուն նպաստող աղջակաբերէն մին, կատարելագործուած էր Տեղակալի յանձնարարած նոր մշակութիւններով՝ վկայեալ պարտիզանի մը միջոցաւ որ զրկուած էր Երևանի բուօսաբանական Խնամքիւսին կողմէ։ Ի միջի այլոց գուրգուրանքով կը պահուէին Հանգուցեալ Խորէն Կաթողիկոսի ձեռուած և զարգացած ասքեկան վարդեկները։

Այս գեղեցիկ պարտէզի հարաւային կողմէ կը գտնուի վանքի թանգարանի մեջ չէնքը, կառուցւած մերկմեան ձարյիկի օրով: Իր չորս համաշափ սրահներով, պարզ չէնք մըն է, դժգախտաբար ոչ բաւականաչափ լուսաւորուած: Հարաւային երեսը կը նաև գէպի ներկասեան լինը: Պարտէզի հիւսիսային կողմի սահմանապատէն անդին կը գտնուի Սինոզի շէնքը, իր յատուկ ծառասանով, որ կ'երկարի մինչև վանքի արտաքին շրջապատի սահմանը, Վաղարշապատի ներկայ հանքային պարտէզի վրայ:

վեր շըշապատ առանց կաւութիւն և կիւսիսային ծալրեռուն կցուած են Ղազարապատի և  
Վեհաբանին՝ հարաւային և կիւսիսային ծալրեռուն կցուած են Ղազարապատի և  
Ֆրանտայ գրան յարկաբաժինները, որոնց մէջ կը բնակին վանքի Միաբանութեան ան-  
գամմեները: Երկու չէնքերն ալ, իբրեւն բոլոր սենեակներով, նորոգուած և կահաւորուած  
էին: Վաղարշապատէն դէպի արևելք երկարող չէնքին մէջ էին վանքի ընդարձակ ճաւ-  
չարանը, մատանը, միթեանոցները, շահմարանները, կառագէ՛ ուր կը պահուէին Ամեն-  
նապատիւ Տեղակալի անձնական գործածութեան յատկացուած ինքնաշրժը և վանքին  
բենատար մէծ ին բնայարժու:

Այս երկար բներանման շէնքի վերջաւորութեան վրայ կը գտնուի տպարանը, իր յարակից շէնքերը: Ասոնց մէջ պիտի կեղդոնացուին Մայր Աթոռի, Վանքի և Ծնծառ յարանի բոլոր տպագրական գործերը:

Տպարանի շէնքերու աջ կողմը կը բարձրանայ և ուղարկ նորաչէն Եպիսկոպոսարանը, գարգարուն և վայելու շէնք մըն է ան առանձին յարկարածիններով և բնակարանի բոլոր յարմարութիւններով: Այս շէնքն ալ ունի իր առջնի ծառաստանը, որուն կերպնական ծառուղին կը տանի դէպի Մատենադարան:

Մատենադարանի շէնքը կը միաժամկետ պարսպէն ներս կառուցուած է շէնքերուն ամեն նիւթաւնն է, իր սինազարդ ճակատով և մուտքով և հայկական ճարտարապետական ընդհանուր գիծերով: Գետնայարկին վրայ ունի ուրիշ յարկ մը, մեծ ու փոքր սենեանիներով ու պատշաճերով: Գետնայարկին վրայ կը գտնուին լուսաւոր և օդասուն մեծ արաներու: Այս շէնքը պիտի գործածուի Ընծայարանի համար: Մրտներէն մէկուն մէջ գասաւորուած աեսանք սաներու գրասուեաններն ու նստարանները, մահճականներն ու անկոյինները: Մատենադարանի և Եպիսկոպոսարանի հուսիսային կողմը կը տարածուի փոքրթամ ծառաստան որ կ'երկարի մինչև Մինողի և նոր Վեհարանի շէնքերը: Ընծայարանը պիտի ունինայ երկու եռամեայ շրջաններ, առաջինը բարձրագոյն գարժարանի ծրագրով, երկրորդը՝ Աստուածարանական:

Գէորգեան Ծեմարանը որ արեւելեան պարսպէն դուրս կը գտնուի իր յարակից շէնքերով, այժմ կը գործածուի իրեր զինուորական ապարհնարան: Յառաջիկային վանքին պիտի տրամադրուի, երբ Ընծայարանը պէտք ունինայ: Ճեմարանի հանդիպակաց մեծ շէնքը կը գործածուի իրեր կեղարուեստից և մշակութային կերոն:

Ներսէսեան կ'էճ իր շրջակայ ծառուութիներով, և մօտակայ անտուով, կ'ջմիածնի ամենահաճիկ զրոսավարն է: Վեհարանի պարտէկէն անցնող մշտական առուն միշտ լեցուն կը պահէ զայն: Հարաւային կողմէն ունի ելք մը որ կը հաւասարաշէզոէ մուտքը: Յաւելեալ ջուրը կը ջրէ անտառը և շրջակայ այգիներն ու պարտէզները: Լճին արեւելեան կողմը կը գտնուի վանքին համբանոց որ այժմ կը ծառայէ իրեր զինուորական կուանդանոց:

Արևմտեան պարիսպէն անմիջապէս գուրս կը գտնուի նոր Վեհարանը որ ուղղակի ծանար կը նայի: Աւարտելէն վերջ գժբախտարար կարելի չէ եղած կահաւորել և գործածել, զլիսաւորաբար անցհաւ պատերազմէն պատճառաւ, ու յեսոյ անոր յաջորդող աննպաստ և ծանր զէպէքերու: Հսկայ շէնք մըն է ան և կահաւորումը և պահպանումը պէտք պիտի ունինայ համապատասխան գումարներու: Ամենապատի Տեղակալ Սրբազնի փափաքն է որ Մայր Տաճարի նորոգութեան զուգազիպի անոր ալ բացումը իրեն յատուկ անկեղծութեամբ և կ'ջմիածնասիրութեամբ կը խորհի թէ անկարելի է մոտածել մարդոց Փիզիքական հանգստի համար երբ հոգին կ'ջմիածնայ Տաճարին մէջ, Աստուծոյ Տաճ մէջ, կը տառապի, անոր տիսուր կերպարանքը տեսնելով: Մէկ մասը կը գործածուի իրեր զինուորական գարժարան:

Ա. կ'ջմիածնի բարսպապատ քանակնեան (275 մէթր լայն և 235 մէթր երկար) ներսն ու գուրսը տարածուած և զարգացած ծառաստաններն ու անտառներ, վանականներու յարատե աշխատանքն մայուն և գնահատելի արդիւնքներէն մին է: Յորս ունինք որ ներկայ Միքարանութիւնը կը նախորդիներու նախանձախնդրութեամբ ներշնչուած և ոգեսրուած անոնց իսէկալով, պիտի արդիւնաւորէ իրեն հասած փառաւոր այս ժառանգութիւնը, վանական կեանքի բոլոր մարզերուն մէջ — կրօնական, ուսումնական, դիմումական:

Յունիս 13-ին և 14-ին մասնակցեցանք եկեղեցականաց այն ժողովներուն որոնք անդի ունեցան Վեհարանին մէջ Ամենապատի Տեղակալ Սրբազնի նախագահութեամբ: Ներկայ էին կիլիկոյ Վեհ: Հայրապետը, եպիսկոպոսները և թեմակալ առաջնորդները: Խորհրդակցութեան նիւթ եղան Ազգ: - Եկեղեցական ժողովի օրակարգին վերաբերեալ խոդիրները:

Յունիս 15-ին առաւօտուն կիլիկոյ Վեհ: Հայրապետի առաջնորդութեամբ բօնոր հոգեկորական պատճամաւորներա ուխտի գացինք Ս. Գայիքանէ կոյսին տաճարը և վերագրածանք ներսէսեան լուզ:

Ազգային-Եկեղեցական ժողով: — Յունիս 16, Տարաթ օր, առաւօտեան ժամը

11-ին, Ս. էջմիածնի Մատենադարանի շենքին մէջ տեղի ունեցաւ Ազգ. - Եկեղեցական ժողովի բացումը ի ներկայականին և մենայն Հայոց Ազգականի Տեղակալ Տ. Գէօրգ Ս. Արքապետապահը, Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոս Պարեկին և Ա. Երուսաղէմի Պատրիարքի, Արքապահին Հայաստանի, Մորհրդային Միասնական և արտասահմանի թղթոր թեմերու հոռ գլորական և աշխարհական պատգամաւորներու, շնչարմէնը 102 պատգամաւոր, 28 ընդուրական և 74 ը աշխարհական:

Թագժան արարողութեան ներկայ էին նաև ՍՍԾ Միութեան Ժողկոմովկետին կից Հոգեկոր Պաշտամունքի Խորհրդի նախագործ ի. Վ. Պուեանի և Խորհրդային Հայաստանի Ժողկոմովկետին կից Հոգեկոր Պաշտամունքի Խորհրդային նախագահ Սուրեն ներսէսի Յովհաննէսին:

Ամենապատի Տեղակալ Սրբազնի հրաւերով բացման ազօթքը արտասանեց Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսը որուն յաջորդեց անմիջապէս և էջմասին ի Հօրէ» շարականի երգեցողութիւնը երեանի Օքերայի մանաւու երգչախուռին կողմէ: Ամեն. Տեղակալը խօսեցաւ իր բացման ճանու համելով Ազգ. - Եկեղեցական Ժողովի պատմական արժէքը, դրուածելով Հայոց ժողովուրդի կատարած գերը, Կայրինական պատերազմի մէջ: Զերմ արտայայտութիւններով ողջունեց Խորհրդային Միութեան ներկայացուցիչ Պ. Ի. Վ. Պուեանակի և Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Պ. Սուրեն Ներսէսի Յովհաննէսինը, Հայաստանեաց Եկեղեցւոյ Ամենաներու ներկայացուցիչները և թեմակալ առաջնորդները և աշխարհական պատգամաւորները: Ի պատասխան խօսք առին Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսը և Խորհրդային Խորհրդային և Հայաստանի Կառավարութեան ներկայացուցիչները: (ՏԵ՛ Սինոն-ի միացեալ նախորդ թիւերը, 5-8):

Ամենապատի Տեղակալ Սրբազնի առաջարկութեամբ Ժողովը հեռազրաւ իր յարգանքն ու երախտագիտութիւնը ներկայացուց ՍՍԾ Միութեան Մեծ Մարաշախտ Ստոլինին:

Ժողովը, անցնելով իր օրակարգին, կատարեց նախագահութեան, Ամենապետութեան և Քարառուղարաւթեան ընտրութիւնները: Նախագահութիւնը յանձնուեցաւ Ամեն. Տեղակալ Սրբազնին, Կիլիկիոյ Վեհ. Խաթօղիկոսին և Երուսաղէմի Պատրիարքին և Ամենապետ ընտրուեցան Տիկար Աւետիք Խաչակիսան, Ակադեմիկոս Ստեփան Մալիշևան, Գևորգ. Ճանիկ Զագըր, Տիկար Հայկ Գավուցնեան և Տիկար Ռոմանոս Խայեան, Թարուղար ընտրուեցան Տ. Գրիգոր Մ. Վրդ. Կարապետեան, Տ. Սահակ Ա. Քնչյ. Սահակեան, Տ. Վահան Քնչյ. Թագարբէկեան և Տիկար Առաքել Խազընեան: Մանդասային Յանձնաժողովի անդամները ընտրուեցան Գեր. Տ. Արտաւազգ Արքապահութիւնը 1941-45 տարիներու Մայր Աթոռի գործառնութեան մասին: Կիլիկիոյ Վեհ.

Այս ընտրութիւններէն յետոյ Ամենապատի Տեղակալ Սրբազնի հրաւերով Ժողովը իր ամրող կազմով Մայր Տաճար գնաց ներկայ գտնուելու Հանգաւցեալ Խորէն Վեհափառ. Կաթողիկոսի Հոգեհանգստեան Պատարագին որ կը մասուցուէր Խիման Սեղանի վրայ: Պատարագին էր Գեր. Տ. Մամրէք Եպիսկոպոս որ և քարոզեց, բնաբան ունենալով և Հոգին քաջ գնան իւր գնէ ի վերայ ոչխարաց: Պատարագին ներկայ էր Քանողրարիի Աւետ Երէց Հրէւիքէթ ծծնուն որ ներկայանալով Ամենապատի Տեղակալին Ազգային-Եկեղեցական ժողովի գումարումը չնորհաւորեց: Ա. Պատարագէն վերջ տղի ունեցաւ նաև Հոգեհանգստեան մասնաւոր պաշտօն և գերեզմանի այցելութիւն ի Ս. Գայիկեան: Յաջորդ օր՝ Կիրակի, Ս. Պատարագը մատուցուեցաւ Աւագ Սկզբանի վրայ, ժամարարութեամբ Գեր. Տ. Արտաւազգ Սրբազնի հուսմբը:

Երկրորդ նիստին, որ ազի օննեցաւ Յունի 18-ին, առաւտեան ժամը 11-ին, Առենապետութեամ Ակադեմիկոս Տիկար Աւետիք Խաչակիսան: Կարդացուեցաւ Խորհ. Պետութեան Ժողկոմիսորէն նախագահ Մարաշխան Յ. Ի. Ստալինին ներկայացուելիք յարգանքի և երախտագիտութեան հեռագիրը: Յետոյ, Ամեն. Տեղակալ Սրբազնը Կարդաց իր զեկուցումը 1941-45 տարիներու Մայր Աթոռի գործառնութեան մասին: Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսը յանուն Ազգ. - Եկեղեցական ժողովին գոհունակութիւն յայտ-

նեց Ամեն։ Տեղակալ Սբրազանի խոհուն, զգոյշ և իմաստուն գործունեութեան համար։ Կարգացուեցան նաև Ամեն։ Տեղակալ Սբրազանի այն յուշագիրը որ մատուցուած էր Մեծ Մարզախտին Ս. էլմիրածնի անհրաժեշտ կարիքներու մասին։ Ընթերցումէն վերջ ժողովին ցոյց տրուեցան Մեծ Մարզախտին հաւանութեան մակագործինը և ստորագրութիւնը զոր հաճած էր զնել յուշագրի ճակտին։ Ժողովը յոտընկայս և ծափահարութեամբ իր խորին յարգանքն ու մեծ երախտագիտութիւնը յայտնեց։ Ժողովը իր երախտագիտութիւնը և յարգանքը յայտնեց նոյնպէս Հայաստանի Խորհրդային Կոռագարութեամբ։

Ժողովը այնուհետեւ զբաղեցաւ Ակադեմիկոս Մալիխասեանի բերած իրըն գրով ըստ որում կ'առաջարկուէր Ազգովին տօնելու Մայր Աթոռի փխուախորութիւնը կիւլիկիայէն էջմիածնին։ Խնդրում զերչանակն կորպացուութիւնը յետաձգուեցան յաջորդ ժողովին որ տեղի ունեցաւ յաջորդու թու Յունիւն 19-ին։ Ատենապետութեամբ Պ. Խանակի հանի և Ճանիկ Զագըրի։ Ատենապետը կարգաց պատճէնը այն հեռազրին որ յանուն ժողովոյ պիտի զրկուէր։ Հայաստանի Խորհրդային Կոռագարութեամբ։ Հեռազրիը ընդունուեցաւ ծափահարութեամբ։

Ժողովը անցաւ եկեղեցւոյ Սահմանադրութեան նախագծի քննութեան, սակայն Ամենապատիւ Տեղակալի առաջարկութեամբ յետաձգեց այդ աշխատանքը յաջորդ նիստաերուն, որպէսզի բոլոր պատգամաւորները անձամբ ուսումնամիջելու պատեհութիւնը ունենան։

Ամեն։ Տեղակալ Սբրազանը մանրամասն տեղեկութիւններ և լուսաբանութիւններ տուաւ Հոգեկոր Ճեմարանի ծրագրի և ծախուց մասին։ Կարգացուեցան ծախուահչւը, որ կը հանէք 1.150.000 ուռութիւն։ Առաջարկուեցան կազմել պիտանէի Յանձնահամութը, մը, Ճեմարանի և Վանքի պիտանէի կազմութեամբ զբաղելու։

Ժողովը յետոյ լսելով Կիլիկիոյ Վեհ։ Կաթողիկոսի կազմած բանաձեկ Մայր Աթոռի Կիլիկիայէն էջմիածնին փխուարքելու տօնակատարութեան մասին, որոշեց 1945-46 տարին հաւաքել Յորեկինական Տարի պատմական այդ դէպարտ և անոր յաջորդող Մայր Աթոռի 500 ամեայ գործունեութիւնը արժանաւորապէս գնահատելու, յիշելով այս առթիւ Կիլիկիոյ, Երուսաղէմի և Կ. Պոլոյ Աթոռուներու ալ մեծագործութիւնները նոյն ժամանակաշրջանի ընթացքին։

Ժողովը իր չորրորդ նիստին մէջ Ատենապետութեամբ Տիար Հայկ Գավուքճեանի և ի ներկայութեան 104 պատգամաւորներու (31 հոգեւորական և 73 աշխարհական) կազմեց Պիտանէի Մասնակութունը։ Ատենապետ Ժողովին յայտարարեց թէ Տիար Մկրտիչ Մորգեան յանձն առած էր Մայր Աթոռուն նուրիելու ապարանական ամրող նոր սարուածք մը։ Ժողովը ընդունեց այս նուրիատութիւնը ծափահարութեամբ։ Այնուհետև ժողովը զբաղեցաւ Ընծայարանի սաներու որդեգրութեան հարցով։ 42 սաներ որդեգրուեցան հետևեալներէն։ Նիւ-հօրքի թեմ՝ 10, Գայիֆօնիոյ թեմ՝ 10, Վրաստանի թեմ՝ 6, Իրանա-Հնդկաստանի թեմ՝ 4, Տիար Հայկ Գավուքճեան՝ 3, Վամեմ, Ճանիկ Զագըր՝ 2, Ատրպատականի թեմ՝ 1, Եղեմի թեմ՝ 1, Գեր. Արտաւազ Սբրազան՝ 1, Ակագեմիկոս Մալիխասեան՝ 1, Մկրտիչ Մորեկան՝ 1, իօժէն Փափակեան՝ 1, և Կարապետ Սարեան՝ 1։ Որդեգրողները յանձն առին իրենց որդեգրեալին համար զմարել 6 տարի, առաքան 500 տողարի հաշով։ Ժողովը ընծայարանի համար անհրաժեշտ տեսաւ նաև Մատենագատան մը որ բովանդակէր կրօնական և եկեղեցական զիրքեր։ Մայր Աթոռի պահպանման համար որդեգրուեցան, «Լուսաւորչի Լումայ»ի տուրքի դրութիւնը։

Ժողովը այս նիստին մէջ մեծ կարեւութեամբ զբաղեցաւ նաև Մայր Յանձնահարութիւնը Տոքը։ Հերկիէթ ծանուն։ Խախագահութեան փափառվ Ատենապետը տուաջարկեց Ժողովի կողմէ շնորհակալութիւն յայտնել բարձրաստիճան հիւրին, իր աղնի հետաքրքրութեան և ուշագրութեան համար։ Տոքը։ Ճոնսըն պատասխանեց Ատենապետի

խօսքին զգայուն ճառով մը : Ամեն . Տեղակալ Սրբազնը գնահատելով յայտնուած զգացութեաբը խոստացաւ գեղեցիկ հոգեար նուերով յաւերժացնել անոր այցելութիւնը :

Երեկոյին , Մայր Տաճարի մէջ , Թարգմանչաց տօնին առթիւ նախատօնակ կատարուեցաւ : Ժողովը , իր կինգերորդ նիստին , ունկնդրեց Պիտոնէի Մասնաժողովի տեղեկագիրը , ըստ որում , կը յայտարարուէր թէ միաձայնութեամբ համաձայն էին որ հարիւրին 5 տոկոսի տուրքի խնդիրը , յանձնուի նորընտիր Հայրապետին տնօրինելու ըստ իւր հայրացակէտին : Ամենապատիւ Տեղակալ Սրբազանը խոստացաւ յաջորդ նիստին լուսաբանութիւններ տալ պիտոնէի մասին : Մանզատային Յանձնաժողովի նախագահ՝ Գեր . Տ . Արտաւաղդ Սրբազան , կարգաց պատգամաւորներու անուանացանկը վերճշգութեաբը համար , և յայտարարեց որ ներկայ պատգամաւորներու թիւը 106-ի հասած էր :

Մայր Տաճարի վերանորոգութեան հարցին նկատմամբ ժողովը Ակադեմիկոս Մալխասնի առաջարկութեամբ որոշեց կազմել նախագիծ - նախահաշիւ մը ձեռնահաս անձերու աջակցութեամբ : Ժողովը , յետոյ , լսելով Եկեղեցւոյ Սահմանադրութեան նախագիծ մասին Տեղակալ Սրբազանի բաւարար բացատրութիւնները , միաձայնութեամբ համամիտ գտնուեցաւ որ անոր քննարկութիւնը կատարուի յաջորդ նիստին :

Այդ նիստին որ տեղի ունեցաւ Ատենապետութեամբ Վսիմ Ճանիկի Զագըրի , ժողովը իր օրակարգի գլխաւոր խնդրոց դանալով կանոնաւորութեան համար որոշեց պիտոնէի հարցը վերջացնելէ յետոյ անմիջապէս կատարել Հայրապետական ընտրութիւնը , իսկ Եկեղեցւոյ Սահմանադրութեան քննութիւնն ու վաւերացումը կատարել ընտրութեանէն յետոյ :

Բայս այդ որոշման , Ամեն . Տեղակալ Սրբազանի հրահանգով Գեր . Տ . Ռուրէն Մ . Վրդ . Դրամբեան , կարգաց 1945-46 տարեցրանի Մայր Սթոռոյ և Ս . Էջմիածնի Միաբանութեան պիտոնէն իր բոլոր մանրամասնութիւններով , որոնց զումարը կը հասնէր 2,100,000 ռուբլիի : Ամեն . Տեղակալ Սրբազանը ժողովին տուաւ բացատրութիւններ և լուսաբանութիւններ թէ՛ պիտոնէի մասին , և թէ՛ եկամտից ազբիւններու մասին : Ժողովը ընդունելով ներկայացուած տեղեկութիւնները՝ որոշեց պիտոնէն գոցել , սահմանաւելիք տուրքին վրայ տաելցնելով «Լուսաւորչ Լուսմա»ն :

Ժողովը յետոյ գործաւ իր օրակարգի յաջորդ կէտին և որոշեց այդ որ Երեկոյեան ժամը 3.30-ին կատարել Հայրապետական ընտրութիւնը Մայր Տաճարին մէջ :

(Ձե՞ս Սիրոնի միացեալ նախորդ թիւերը , 5-8):

Ազգ . - Եկեղեցական ժողովի վերջին նիստը տեղի ունեցաւ Յունիսի 25-ին , նախագահութեամբ Ն . Ս . Օծութեան Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ . Տ . Գէորգ Զ . ի . , և Ատենապետութեամբ Ակադեմիկոս Աւետիք Խաչակեանը , ժողովը անցաւ Եկեղեցւոյ Սահմանադրութեան քննութեան և վաւերացման : Կարդացուեցաւ Սահմանադրութիւնը : Եղած գիտողութիւններուն տրուեցան բաւարար լուսաբանութիւններ : Ժողովը ընդունեց զայն այնպէս ինչպէս ներկայացուած էր — իրեն նախագիծ և ոչ վերջնական բոլոյթ ունեցող օրէնք : Կոնդակաւ զրիւելէ յետոյ և գործնական բովէ անցնելէ վերջ անկաշ պիտի խմբագրուի վերջնականապէս և պիտի համատառուի Ազգ . - Եկեղեցական ժողովի կողմէ :

Ժողովը կազմեց Գերագոյն Հոգեորդ Առինուրդը հետևեալ հոգեորդական և աշխարհական անդամներէ . Տ . Ռուրէն Մ . Վրդ . Դրամբեան (այժմ Եպիսկոպոս) , Տ . Վահան Մ . Վրդ . Կոստանեան (այժմ Եպս.) , Տ . Ներսէն Մ . Վրդ . Արքահամեան (այժմ Եպս.) , Տ . Կարապետ Մ . Վրդ . Թումանեան (այժմ Եպս.) , և Տ . Եղիշէ Վրդ . Յարութիւննեան , Ակադեմիկոս Ատեփան Մալխասեան , Երուանդ Շահազիզ , Քրօֆ . Մինասեան և Սեբիքան Կամսարական :

Եկեղեցւոյ Բարեկարգութեան հարցին նկատմամբ եղած հարցումին ի պատասխան Ամեն . Տեղակալ Սրբազանը վերստին յայտարարեց թէ ժամանակի սղութեան և այլ պատճառներով ժողովը հարաւորութիւն պիտի չունենար զբաղելու այդ հարցով : (2)